MUSICMУЗЫКAMUSIQUEMUZIEK

Ռուզաննա Եսայան

# ԵՐԳԺՇՏՈՒԹՅՈՒՆ

## ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

# 2

**Ռուզաննա Եսայան**

# ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ 2

## *Ուսուցչի ձեռնարկ*

**Երևան 2023**

# «ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ»
## առարկայի դասագրքերի ընդհանուր նկարագիր

Համաձայն ԿԳՄՍ նախարարության հաստատած թեմաների, երկրորդ դասարանի «ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ» առարկայի դասագրքում հաստատված նյութերի բացատրությունները ներկայացված են մուլտֆիլմերից ընտրած հատվածների օգնությամբ: Երեխաների սերը և հետաքրքրությունը մուլտֆիլմերի նկատմամբ կնպաստի, որպեսզի նյութն ավելի հեշտ ընկալելն:

# ՀԱՐԳԵԼԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

Ձեզ առաջարկվող «ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ» առարկայի դասագրքի թեմաները ներկայացված են **մուլտֆիլմերի** երաժշտության օգնությամբ: Այս ձևը հնարավորություն կտա երեխաներին սիրով ու հետաքրքրությամբ ծանոթանալու առարկային, այն ավելի մատչելի և արագ ընկալել:

- Տվյալ դասաժամին վերաբերող բոլոր տեսանյութերն առկա են QR ծածկագրերում: Պետք է ունկնդրել հենց տրված հերթականությամբ:
- Տեսանյութը դիտելուց հետո, մուլտֆիլմերի երաժշտության վերաբերյալ պետք է մտքեր փոխանակել, քննարկել այն:
- Կան դասաժամեր, որոնց ընթացքում անհրաժեշտ է բացատրել երաժշտական տերմինները: Դրանց համառոտ բացատրությունները տրված են դասագրքի վերջում: Այդ բառարանից պետք է օգտվեն նաև սովորողները:
- Դասագրքի որոշ էջերում գրված են շեղատառ բառեր: Դրանք տրվում են որպես նախորդ դասերի կրկնություններ: Ուսուցիչը այդ բառերով պետք է ստուգի՝ արդյոք աշակերտներն ընկալել են անցած թեմաների նյութերը:
- Դասագրքի էջ 53-ում տրված են նոտային վարժություններ, որոնց մատուցման ձևը դասարանում պետք է որոշի ուսուցիչը՝ հաշվի առնելով դասարանի աշակերտների ընկալունակությունը:
- Թեմայի ամփոփման դասաժամին մուլտֆիլմերը պետք է ունկնդրել տրված հերթականությամբ՝ ընդմիջելով էջերին նշված հարցերով և պատասխաններով:
- Այստեղ շատ կարևոր է նշել ուսուցչի տվյալ դասաժամին պատրաստ լինելը: Եթե մատուցվող նյութը նախօրոք չի մշակել դասատուն, չի «անցել» նրա զգայարաններով, ապա կարող ենք համարենք, որ այդ դասաժամի 40 րոպեն կորած է: Աշակերտն ամեն դասից պետք է տանի մի նոր գիտելիք, մի նոր զգացմունք: Քանի՞ այդպիսի 40 րոպեներ են կորչում ուսուցչի անտարբեր վերաբերմունքի, դասին անպատրաստ ներկայանալու պատճառով: Այդպիսի մոտեցումը չի ներշնչում սեր ու հետաքրքրություն դասական երաժշտության հանդեպ, չի ոգևորում սովորողներին:

Դասավանդման այս ձևը մի՞գուցե օգնի ձեզ, հարգելի ուսուցիչներ, որպեսզի սովորողներին հնարավորություն տաք զգալու երաժշտության հզոր ուժը, նրա դրական ազդեցությունը և անբաժանելի ներկայությունը նրանց կյանքում:

Այս ձեռնարկում ներկայացված է նաև «Ուսուցչի մեթոդական ուղեցույցը»:

# 2-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ
# ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ
## առարկայի ծրագրի նպատակները և վերջնարդյունքը

**ՆՊԱՏԱԿՆԵՐ**

- Ձևավորել գիտելիքներ երաժշտության ամենապարզ ժանրերի (տեսակների) մասին:
- Ձևավորել կարողություններ՝ դրանք ունկնդրելու, ընկալելու, կատարելու և ներկայացնելու համար:
- Ձևավորել օպերայի, բալետի և սիմֆոնիայի մասին պատկերացումներ:
- Ձևավորել և զարգացնել ձեռքի նշաններով հնչյունաշարի ձայնաստիճանները երգելու կարողություններ:
- Ձևավորել պատկերացումներ **մեղեդու**՝ որպես երաժշտական ստեղծագործության իմաստն արտահայտող հասկացության մասին:

**ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔ**

- Հաղորդակցվի և ինքնարտահայտվի ունկնդրվող նյութի միջոցով:
- Ճանաչի երաժշտության պարզ ժանրերը (տեսակները):
- Բացատրի ստեղծագործության բովանդակությունը, բնույթը, տեմպը, դինամիկան, իր տպավորություններն ու զգացողությունները ներկայացնի գույներով կամ նկարելով:
- Ստեղծի երաժշտական նյութին համապատասխան ռիթմական նվագակցություն «բնական» նվագարաններով՝ ձեռքերով, ոտքերով:
- Ճանաչի օպերայի, բալետի և սիմֆոնիկ երաժշտության մեջ երգային, պարային, քայլերգային երաժշտություն:
- Թվարկի երաժշտական հնչյունների անունները և ձեռքի նշաններով երգի հնչյունաշարի ձայնաստիճանները:
- Ընկալի **մեղեդին** և երգի որպես երաժշտական ստեղծագործության իմաստն արտահայտող հասկացություն:

**2-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ**

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ**

**32 ժամ**

**շաբաթական 1 ժամ**

| Ժամ | Էջ | Թեմա | Մուլտֆիլմեր |
|---|---|---|---|
| 1 | 4-5 | ԹԵՄԱ 1<br>ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՐԶ ՈՒ ՄԱՏՉԵԼԻ ԺԱՆՐԵՐԸ<br><br>ԵՆԹԱԹԵՄԱ 1<br>ՈՒՐ ԵՆ ՏԱՆՈՒՄ ՄԵԶ ԱՅԴ ԺԱՆՐԵՐԸ<br><br>Քայլերգ | «Սպիտակաձյունիկը» |
| 2 | 6-7 | Ռեգիստր (ձայնասահման)<br><br>Պարում ենք «ԲԱԴԻԿՆԵՐԻ ՊԱՐԸ» | «Կենդանիների կառնավալ»<br>– Հավերը և աքաղաղները<br>– Թռչունները<br>– Կկուն անտառում |
| 3 | 8-9 | Տեմպ | «Կրիան»<br>«Կրիայի մասին»<br>«Թե ինչպես էին Կորյունն ու Կրիան երգում» |
| 4 | 10-11 | Սովորում ենք պարել<br>«ԹԱՄԶԱՐԱ» պարը | «Ջունգլիների գիրքը» |
| 5 | 12-13 | | «Կենդանապոլիս»<br>«Կենդանիների կառնավալ»<br>– Կենգուրու<br>Ֆլամինգոներ<br>«Երեք խոզուկ» |

| | | | |
|---|---|---|---|
| 6 | 14-15 | Ռիթմ<br><br>Սովորում և երգում «ՋԱՆ ԾԱՂԻԿ» երգը | «Բոլերո»<br>«Կենդանիների կառնավալ»<br>– Կարապը<br><br>«Հեքիաթ Սալթան թագավորի մասին»<br>– Իշամեղվի թռիչքը |
| 7 | 16-17 | | «Հերակլես»<br>«Կախարդի աշակերտը» |
| 8 | 18-19 | ԱՄՓՈՓՈՒՄ | |
| 9 | 20-21 | Օպերա<br><br>Սովորում ենք պարել «ՇԱՖԼ» | «Ճանճը փոքրիկ, ոսկեփորիկ»<br>«Մինյոնները»<br>«Անճոռնի ես» |
| 10 | 22-23 | Բալետ | Բարբի՝ վարդագույն պուանտներով բալետի պարուհին<br>Բալետի պարուհին |
| 11 | 24 | Դինամիկայի նշաններ | «Թզուկները և լեռնային թագավորը» |
| 12 | 25 | Սովորում ենք «ՄԱՌԱՆ» երգը | «Գտնված երազ» |
| 13 | 26-27 | Սիմֆոնիա | «Ակվարիում»<br>«Ջրահարսը» |
| 14 | 28-29 | Սովորում ենք պարել «Լետկա-ենկա» | «Պինգվին Վինը»<br>«Ումկան»<br>«Ուրախ ոտքեր» |
| 15 | 30-31 | | «Մարդուկ-Ջարդուկը և մկների թագավորը» |
| 16 | 32-33 | ԱՄՓՈՓՈՒՄ | |

| | | | |
|---|---|---|---|
| **17** | **34** | **ԹԵՄԱ 2**<br>**ԻՆՉՊԵՍ Է ՍՏԵՂԾՎՈՒՄ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ**<br>**Երաժշտական այբուբեն**<br><br>**ԵՆԹԱԹԵՄԱ 1**<br>**ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՉԱՄԻՋՈՑՆԵՐ** | **«Ձմեռ պապն ու ամառը»**<br>**«Մանչուկն ու Կառլսոնը»** |
| **18** | **35** | **Բալետ**<br>**Երգենք միասին «ԱՐԵՎԱՇՈՂ» երգը** | **«Սառցե սիրտը»** |
| **19** | **36-37** | **Նոտա**<br>**Հնգագիծ** | **«Գեղեցկուհին և հրեշը»** |
| **20** | **38** | **Մեղեդի**<br><br>**Երգենք միասին «ԱՐԵՎԸ ՇՈՂՈՒՄ Է» երգը** | **«Բրեմենյան երաժիշտները»** |
| **21** | **39** | **Սովորենք պարել**<br>**«ՎԵՐՎԵՐԻ» պարը** | **«Շրեկ»**<br>**«Կոշկավոր կատուն»** |
| **22** | **40-41** | **Հնչյունների վանկային անվանումները – դո, ռե, մի, ֆա, սոլ, լա, սի**<br><br>**Բանալի**<br>**Սոլի բանալի** | **«Առյուծ արքան»**<br>**«Բոնիֆացիի արձակուրդը»** |
| **23** | **42** | **Պարենք մուլտֆիլմի** | **«Մադագասկար»** |

| | | | |
|---|---|---|---|
| | | **հերոսների հետ** | |
| **24** | **43** | **ԱՄՓՈՓՈՒՄ** | |
| **25** | **44-45** | **Նոտաները**<br>**Երկար և կարճ տևողություններ** | **«Մկնիկի երգը»**<br>**«Պույ-պույ»**<br>**«Երգի՛ր»** |
| **26** | **46-47** | **Տակտ**<br>**Տակտի գիծ**<br>**Երգենք «ԵԿԵՔ ԱՅՍ ՕՐԸ ԼԱՎ ՍԿՍԵՆՔ» երգը** | **«Երգի՛ր»** |
| **27** | **48-49** | **Ձեռքի նշաններ** | **«Կենդանիների կառնավալ» – Փիղը**<br>**«Դամբո»** |
| **28** | **50** | | **«Ալադին»** |
| **29** | **51** | | **«Մուլան»** |
| **30** | **52-53** | **Նոտային վարժություններ** | **«Չիպոլլինո»** |
| **31** | **54-55** | **ԱՄՓՈՓՈՒՄ** | |
| **32** | **56** | **ԹԵՄԱՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ** | |

## Բովանդակություն

«ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ» առարկայի
դասագրքերի ընդհանուր նկարագիր.....3

ՀԱՐԳԵԼԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ ..... 4

2-րդ դասարան
ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ
առարկայի ծրագրի նպատակները և վերջնարդյունքը .....5

2-րդ ԴԱՍԱՐԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ..... 6

**Ռուզաննա Եսայան**

# ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ 2

## *Ուսուցչի ձեռնարկ*

ՎԱՍԻԼԻ ԿԱՆԴԻՆՍԿԻ
ՏՊԱՎՈՐԹՈՒԹՅՈՒՆ-III-ԿՈՆՑԵՐՏ / 1911

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Դ. Մալյան 43
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am